ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/6 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով վերականգնողական աշխատանքների (ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր և ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցիներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.06.2023թ. ժամը 15:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«Հարսնաձոր» ՍՊԸ	harsnadzor@yandex.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«Հարսնաձոր» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	299747802	249785725	299742870
2	119196066	-	-

5. Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2023թ հունիսի 7-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 07.06.2023թ. ժամը 11:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «Հարսնաձոր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ բավարար գնահատված հատեր ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **««Հարսնաձոր» ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին.

8.1 Հրապարակել 1-ին չափաբաժնի համար պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, ոչ մի հայտ չի ներկայացվել հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Հովսեփյան /նախագահ/

---------- Լուսինե Իգիթյան

---------- Սուրեն Շաքարյան

---------- Արմինե Ստեփանյան

---------- Վերգինե Սահակյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/